ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժէ. դարուն երկրորդ կէսը՝ ընդհանուր առմամբ՝ անկման շրջան մ'է Հայ Ազգին և Հայ Եկեղեցւոյն համար։

Հայը քաղաքականապէս կը հեծէ պարսիկներու և օսմանցիներու լուծին տակ։ Ժողովուրդը ենթարկուած է կեղեքումներու, հարստահարութեանց (1) և տեղահանութիւններու։ Առաքել Դաւրիժեցի կը վկայէ՝ թէ «ի 1655 թուին զդաշտեցի հայերն յԱսպահան քաղաքի մէջէն հանին և յեզր քաղաքի բնակեցուցին, հրամանաւ երկրորդ Շահ Աբասին։ ի 1656 թուին զերեւանցի և զայլ ևս հայերն հանին յԱսպահանայ քաղաքի մէջէն, և յեզր քաղաքին բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահ Աբասին» (2)։ Բացի սակաւաթիւ բացա-

---

(1) Առաքել Դաւրիժեցի, Պատմ. Ամսթերտամ, 1669 էջ 7, 215–236. Jehay F. Van den Steen, De la Situation légale des sujets ottomans non-musulmans, Bruxelles 1906 p. 20–21. Archivio S. C. P. F. Miscel. Tom. X, fol. 133։

(2) Առաքել Դաւրիժեցի, Անդ. էջ 500։